և զերեքօրեայ յարութենէն. եկեր անդ 'ի վերնատան ըզ-
զատիկն, հաստատեաց զխորհուրդ փրկական պատարա-
գին, լուաց զոտս աշակերտացն, մատնեցաւ յաշակերտէն,
կալեալ կապեցաւ 'ի զինուորաց յաղօթելն 'ի պարտիզին,
և ածաւ 'ի տուն քահանայապետին Աննայի. եւ տեսեալ
զնա յայն վիճակ դառնութեան՝ ուրախ եղեւ, և ետ կա-
պել առ վայր մի 'ի ծառն ձիթենւոյ, (որոյ շառաւիղքն
կան մինչեւ ցայսօր) եւ ապա առաքեաց առ փեսայ իւր
Կայիափայ քահանայապետ մեծ [1]։ Ապտակեցաւ 'ի ծա-
ռայէն՝ չարչարեալ զգիշերն ողջոյն 'ի խուժանէն յայսն
կատականաց, երիցս ուրացաւ 'ի ծերունի աշակերտէն,
և այլքն փախեան։ Եկաց առաջի դատաւորին, յայտ ա-
րար և ոչ թագոյց թէ արդարեւ Քրիստոսն է եւ Թագա-
ւոր։ Յետ բազում դիմադարձութեան եւ խոստովանելոյ
զանմեղութիւն նորա՝ ապա մատնեաց զնա դատաւորն
'ի ձեռս՝ առ ահի ժողովրդեանն։ Յետ բազմապատիկ գա-
նիից, նախատանաց և թշնամանաց բառնայր յինքեան ըզ-
փայտ խաչին, ելանէր 'ի Գողգոթայ, մատուցանէր զինքն
պատարագ բոլորանուէր մատուցանելով աղօթս առ Հայր
վասն հաշտութեան մարդկան ընդ Աստուծոյ, եւ սասա-
նեալ շարժեցաւ բնութիւնն անմեռունչ. ետուն դժոխք
զաւար իւրեանց 'ի դուրս. վարագոյրն, որ զսրբութիւն
հնոց կտակարանացն ծածկէր՝ ցելաւ վերուստ 'ի վայր.
բերան առն հեթանոսի օրհնեաց զԱստուած և խոստովան
եղեւ թէ արդարեւ այրս այս արդար էր և Որդի Աստու-
ծոյ. զերիս ժամս խաւար կալաւ զաշխարհ։ Յովսէփ այր
արդար և բարեգործ, իջոյց զմարմինն Յիսուսի 'ի խաչէն
Նիկոդիմոսիւ, խնկեալ պատեաց զնա սուրբ կտաւովք,
և թաղեաց մեծաւ փառաւորութեամբ 'ի նոր դերեզմանի։
Իսկ Յիսուս աւերեալ զդժոխս և յաղթեալ բռնութեան
մահու՝ յետ երից աւուրց յարուցեալ եկ 'ի դերեզմանէն,
զոր կնքեալ էին մատանեաւ և պահէին զօրականաւ. ե-
րեւեցաւ ամենօրհնեալ մօրն, կանանցն Իւղաբերից և Աշա-
կերտացն, Թովմայի, Կղէոպասեանց, եւ այլոց. եկաց ընդ
նոսա աւուրս քառասուն արարեալ նշանս առաջի նոցա։

---

[1] Այժմ վանք Հայոց Ս. Փրկչի՝ ուր է և բանտ կենարարին մերոյ։